# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*«06» հունիսի 2019թ.*

*No 323*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,
կից ուղարկում ենք Գյուլագարակ համայնքի ղեկավարի թիվ 155-161 որոշումները:

Առդիր 7թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք, Հեռ՝ 0256 6 21 67
Էլ. Փոստ gyulagarak.lori@mta.gov.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 155

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Մարտունի Մուրադյանի 20.05.2019թ. հայտը, որոշում եմ.

Մարտունի Մուրադյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գյուղ Գարգառ Կենտրոնական 79/3 հասցեում գտնվող հողամասում ավտոլվացման կետ կառուցելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թ.
մայիսի 23

գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» մայիսի 2019 թվականի N 156

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետը, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Պուշկինո գյուղի 06-093-0039-0014 կադաստրային ծածկագրի տակ գտնվող Հայաստան Եգնակի Մուրադյանի անվամբ գրանցված 01243հա բնակելի տան, տնամերձին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Պուշկինո 1-ին փողոց թիվ 61:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» ՄԱՅԻՍ 2019 թվականի N 157

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցման 03.02. 2003 թ. թիվ 1024514 վկայականը, ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի բնակելի կառուցապատման հողամասին իր շենք շինություններով տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ.Գյուլագարակ 2-րդ փողոց, թիվ 27 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» Մայիսի 2019 թվականի N 158

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 64 / 8 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ՎԱՉԱԳԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 24 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչագան Բաղդասարյանի 24 հա արոտավայրի վարձակալությունից հրաժարվելու մասին 16.05.2019թ. գրավոր դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Լուծարել Վաչագան Բաղդասարյանի և Գյուլագարակ համայնքի հետ կնքած 20.02.2007 թ. վարձակալության պայմանագիրը, դադարեցնելով նրա վարձակալության իրավունքը 24 հա արոտի նկատմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» Մայիսի 2019 թվականի N 159

Համայնքի ղեկավարի որոշում

**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 06-013-0034-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՍՏԿԱՑՆԵԼՈՒ,ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Երվանդ Պետրոսյանի դիմումը,<<.ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ>> ԱՁԸ -ի կողմից տրված տնատիրության տեղագրական հատակագիծը,ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով,64-րդ հոդվածի 8-րդ և 16 –րդ մասերով,<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հարապետության օրենքի 2-րդ և 3 –րդ հոդվածներով,<<տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով,Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005 թ. Թիվ 2387 որոշմամբ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել Գյուլագարակ համայնքի 06-013-0034-0004 ծածկագրի տակ գտնվող 0.11821 հա հողամասի հողհատկացման հիմքերը `

1) Գյուլագարակ համայնքի 06-013-0034-0004 ծածկագրի տակ գտնվող հողամասը 0.11821 հա

2) հողամասի սահմանները և հատակագիծը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման առաջին կետում նշված 0.11821 հա օրինական հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Երվանդ,Հերմինե,Էդգար,Քրիստինե Պետրոսյանների հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և/կամ/ չի առաջացնում սերվիտուտ :

3. Վերականգնել և ճանաչել 0,11821 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող,առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտի պահանջելու իրավունք չառաջացնող 1972թ. կառուցված 99.06 քմ բնակելի տան, 1972 թ. Կառուցված 46.92 քմ. Բնակելի տան,բաց պատշգամբի 1972 թ. Ին կառուցված 99.06 քմ. աստիճանավանդակի, 1972 թ. ին կառուցված 21.79 քմ կիսանկուղի, նկատմամբ Երվանդ,Հերմինե,Էդգար,Քրիստինե Պետրոսյանների սեփականության իրավունքը :

4. Հողամասի. սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով :

5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Գյուլագարակ համայնք գյուղ Ամրակից 2-րդ փողոց, Թիվ 38:

**Համայնքի ղեկավար** **Մ.Գևորգյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30» ՄԱՅԻՍ 2019 թվականի N 160

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցման 06.04. 2007 թ. թիվ 2331747 վկայականը, ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35 -րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի 06-027-0176-0004 ծածկագրի բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասին իր շենք շինություններով տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ.Գարգառ Կենտրոնական փողոց, . թիվ 1/4:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2019 թվականի N 161

## 06-062-0016-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29 դեկտեմբեր 2005թ. Թիվ 2387 – Ն որոշման

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 06-062-0016-0003 ծածկագրի տակ գտնվող բնակելի տանը և տնամերձ հողամասին /0,213հա/ տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գյուղ Հոբարձի 4-րդ փողոց 1-ին նրբ. թիվ 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Միեր Գևորգյան